

ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻԱՑՅԱԼ
ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
2016 ԹՎԱԿԱՆԻ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Զեկուցող՝ ՇՊՀ արհկոմի նախագահ՝ պրոֆեսոր Վ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի արհեստակցական կազմակերպությունը համալսարանի աշխատողների կամավոր միավորում է, որը ստեղծվում է նրանց գործունեությունը համակարգելու, աշխատողների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական և այլ շահերն ու իրավունքները ներկայացնելու և պաշտպանելու համար:

Ցանկացած կազմակերպության գործունեությունը սկսվում է գործունեության հիմնական ուղղությունների հստակեցմամբ:

Արհեստակցական կազմակերպության գործունեության հիմնական ուղղություններն են.

1. Մասնակցել գործատուի կողմից արհեստակցական կազմակերպության անդամների աշխատանքային, սոցիալ-տնտեսական և իրավական շահերը շոշափող կանոնակարգերի մշակման աշխատաքներին,
2. ՇՊՀ-ի աշխատողների աշխատանքային, սոցիալական և այլ շահերն ու իրավունքները ներկայացնելու և պաշտպանելու նպատակով հսկողություն իրականացնել դրա կատարման նկատմամբ,
3. համաձայն գործող օրենսդրության՝ մասնակցել կոլեկտիվ աշխատանքային վեճերի կարգավորմանը,
4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ վերահսկել գործատուի կողմից աշխատանքային օրենսդրության և աշխատանքի պաշտպանության կանոնների պահպանմանը,
5. Համալսարանի ղեկավարության առջև հանդես գալ ներբուհական կյանքին վերաբերող նախաձեռնություններով՝ նպատակ ունենալով բարելավել ՇՊՀ-ի աշխատակիցների սոցիալական վիճակն ու պայմանները:

Հաշվետու ժամանակահատվածում ՇՊՀ արհկոմի աշխատանքները կրել են սոցիալական բնույթ:

Արհեստակցական կազմակերպության գործունեության արդյունավետությունը, հետևաբար աշխատողների շահերի պաշտպանությունը հիմնականում պայմանավորված են անհատական և կոլեկտիվ պայմանագրերի բովանդակությամբ, սոցիալական նպատակայնությամբ: Հասկանալի է, որ կոլեկտիվ պայմանագիրը չի կարող ավելի գերակա իրավական ուժ ունենալ, քան ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, սակայն գործատու-արհեստակցական կազմակերպություն հարաբերություններում աշխատանքի և դրա հետ կապված այլ սոցիալական խնդիրներին հնարավոր լուծում տալու միջոց է:

Ճիշտ է փոխվեց բուհի կարգավիճակը, բայց արհկոմի խնդիրները՝ կապված աշխատողների սոցիալական խնդիրների լուծման և բարելավման հետ, մնացին անփոփոխ:

Արհկոմն ունի հաստիքային մեկ աշխատող, որը, ըստ Արհեստակցական կազմակերպության կանոնադրության, վճարվում է հավաքագրված գումարի 40%-ի չափով՝ ներառյալ եկամտահարկը, իսկ մնացած 60% հատկացվում է կոլեկտիվի սոցիալ-տնտեսական, կուլտուր-մշակութային միջոցառումների կազմակերպելու, անցկացնելու և աջակցելու համար:

Հարկ է նշել, որ աշխատողների սոցիալական ծանր վիճակը մեղմելու նպատակով ռեկտորի նախաձեռնությամբ և արհկոմի միջնորդությամբ բարձրացվեցին աշխատավարձերը:

Արհկոմը նաև աշխատանքներ է տանում կոլեկտիվի առողջության ապահովագրության ուղղությամբ, կազմակերպում հանդիպումներ նման կազմակերպությունների հետ:

Արհեստակցական կազմակերպությունը կազմակերպել և անցկացրել է տարբեր տեսակի և բնույթի միջոցառումներ՝ նվիրված Մեծ հաղթանակին, Եղեռնին, դեկտեմբերի 7-ին, մայրության ու գեղեցկության տոնին, Ամանորին:

Արհկոմը կազմակերպչական, ինչպես նաև ֆինանսական մասնակցություն ունեցավ Անկախության 25-ամյակին նվիրված միջոցառմանը, ինչը տեղի ունեցավ Թորոս գյուղում: Կազմակերպվեց հյուրասիրություն՝ երաժշտության ուղեկցությամբ:

Դեկտեմբերի 7-ին՝ երկրաշարժի տարելիցին արհկոմի աջակցությամբ և մասնակցությամբ ծաղկեպսակ դրվեց անմեղ զոհերի հուշարձանին:

Ամանորյա և Մուրբ ծննդյան միջոցառումների շրջանակներում համալսարանի ճեմասրահում կազմակերպվեց մեծ միջոցառում-հյուրասիրություն, որին մասնակցում էր համալսարանի ողջ կոլեկտիվը: Համալսարանի աշխատակիցների մինչև 10 տարեկան երեխաներին և թոռներին նվիրվեցին տոնական պարկեր՝ 450 հատ, ինչպես նաև բաժանվեց ամանորյա ներկայացումների 200 տոմս: Շուրջ 500 աշխատակցի բաժանվեցին տոնական նվերներ (շոկոլադ ու գինի):

Հայոց բանակի կազմավորման տարելիցի օրը՝ հունվարի 28-ին, Գյումրիում տեղակայված գորամասերից մեկում արհկոմի աջակցությամբ կազմակերպվեց ցուցահանդես:

Չխախտելով ավանդույթը, մարտի 7-ին ռեկտորը, համալսարանի ֆինանսական միջոցներից համալսարանի աշխատակից կանանց նվիրեց 20.000-ական դրամ:

Մայրության և գեղեկության տոնի կապակցությամբ արհկոմը համալսարանի ճեմասրահում կազմակերպեց դասական երաժշտության համերգ, իսկ գեղեցիկ սեռի ներկայացուցիչներին նվիրեց մեկական ծաղիկ: Նույն օրը արհկոմի աջակցությամբ բացվեց ցուցահանդես՝ նվիրված Մայրության ու գեղեկության տոնին:

Ապրիլի 24-ին՝ Եղեռնի 102-րդ տարելիցի օրը, Ջարդի ձորում անմեղ զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողին դրվեցին ծաղկեպսակ և ծաղիկներ:

Մեծ Հաղթանակի և Շուշիի ազատագրման տոների կապակցությամբ Մայր Հայաստան հուշահամալիրին դրվեցին ծաղկեպսակ և ծաղիկներ:

Փորձում ենք ավանդույթ դարձնել կենսաթոշակի անցած աշխատակիցներին պատվով ճանապարհելու կարգը, որը կատարվեց այս տարի: Դրա շրջանակներում նվիրվեցին ծաղիկներ ու նվերներ:

Արհկոմը օժանդակում է նաև Ուսխորհրդի նախաձեռնած որոշ ծրագրերի՝ և բարոյապես, և ֆինանսապես:

Արհկոմը ակտիվորեն մասնակցում է համալսարանում կատարվող բարեփոխումներին, աջակից լինում բոլոր այն նախաձեռնություններին, որոնք ուղղված են բարելավելու ուսումնական գործընթացը և աշխատողների սոցիալ-տնտեսական պայմանները:

ՇՊՀ-ի արհեստակցական կազմակերպությունը գործել ու գործում է «ՀՀ Աշխատանքային օրենսգրքի», «ՀՀ Արհեստակցական կազմակերպությունների մասին» օրենքի և «ՇՊՀ Արհեստակցական կազմակերպության կանոնադրության» և «ՇՊՀ կոլեկտիվ պայմանագրի» շրջանակներում:

Արհկոմը ունի նաև չլուծված խնդիրներ, որոնք արժանի են ուշադրության.

1. հստակեցնել սոցիալական ծանր վիճակում գտնվողների ցուցակը:
2. Կապ հաստատել հասարակական կազմակերպությունների հետ, օգտագործել նրանց կապերը՝ ծառայեցնելով աշխատողների շահերին:
3. Լինել ավելի նախաձեռնող մշակութային ու սոցիալական միջոցառումների կազմակերպման գործում:
4. Կապ հաստատել մյուս բուհերի արհկոմների հետ:
5. Արհկոմի նաղաձեռնությամբ կազմակերպել «Ծննդօգնություն համալսարանականներին» ծրագիրը:

Արհեստակցական կազմակերպության ֆինանսական ելքերն ու մուտքերը վերահսկվում են արհկոմի վերստուգիչ հանձնաժողովի կողմից:

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Լսելով և քննարկելով ՇՊՀ արհկոմի մեկ տարվա կատարած աշխատանքները՝ համալսարանի ներկայացուցչական արհկոմի ժողովը նշում է, որ այդ ընթացքում կատարվել են որոշակի աշխատանքներ.

- հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել և անցկացվել են արհկոմի խորհրդի նիստեր, տարաբնույթ քննարկումներ և քննարկված հարցերն ու խնդիրները ներկայացվել են համալսարանի ղեկավարությանը:

- Արհկոմի հարաբերությունները գործատուի հետ կարգավորվել են կոլեկտիվ պայմանագրով:

- Արհկոմը մասնակցել ու մասնակցում է համալսարանում տեղի ունեցող բոլոր բարեփոխումներին:

- Արհկոմը կազմակերպել և անցկացրել է տարաբնույթ միջոցառումներ (նվիրված Մեծ հաղթանակին, Եղեռնին, դեկտեմբերի 7-ին, մայրության ու գեղեցկության տոնին, Ամանորին):

- Արհկոմն ունի հաստիքային մեկ աշխատող, որը, ըստ Արհեստակցական կազմակերպության կանոնադրության, վճարվում է հավաքագրված գումարի 40%-ի չափով՝ ներառյալ եկամտահարկը, իսկ մնացած 60% հատկացվում է կոլեկտիվի սոցիալ-տնտեսական, կուլտուր-մշակութային միջոցառումների կազմակերպելու, անցկացնելու և աջակցելու համար:

- ՇՊՀ-ի արհեստակցական կազմակերպությունը գործել ու գործում է «ՀՀ Աշխատանքային օրենսգրքի», «ՀՀ Արհեստակցական կազմակերպությունների մասին» օրենքի և «ՇՊՀ Արհեստակցական կազմակերպության կանոնադրության» և «ՇՊՀ կոլեկտիվ պայմանագրի» շրջանակներում:

Կատարված աշխատանքների կողքին կան նաև թերացումներ և բացթողումներ.

- Չի ստեղծվել առանձին հանձնաժողով, որը պետք է հստակեցնի սոցիալական ծանր վիյակում գտնվող աշխատակիցների ցուցակը:

- ՇՊՀ-ի աշխատակիցների համար չեն կազմակերպվել բժշկական ստուգումներ, հոգեբանական ու իրավաբանական խորհրդատվություններ տեղում (համալսարանի բուժաշխատողների, հոգեբանների ու իրավաբանների օգնությամբ):

• Բավարար կապ չկա հանրապետության մյուս բուհերի արհեստակցական կազմակերպությունների հետ:

Քննարկելով ՇՊՀ Արհեստակցական կազմակերպության մեկ տարվա կատարած աշխատանքների հաշվետվությունը՝ ժողովը որոշում է աշխատանքները գնահատել _____

Ժողովը որոշում է.

1. ղիմել համալսարանի ռեկտորին՝ համապատասխան աշխատանքներ տանելու, բժշկական, հոգեբանական և իրավաբանական կաբինետներ ստեղծելու, ինչպես նաև տարին երկու անգամ կազմակերպել անվճար խորհրդատվություններ՝ մասնակից դարձնելով նաև համալսարանի աշխատակից բժիշկ, հոգեբան և իրավաբան դասախոսներին:

2. Դիմել համալսարանի ղեկավարությանը՝ հաշմանդամության կարգ ունեցող աշխատակիցներին անհրաժեշտ բուժսպասարկման համար հավելյալ գումարներ տրամադրելու խնդրանքով (I կամ II կարգի հաշմանդամներ):

3. Հաշվի առնելով ծնելիության ցածր մակարդակը՝ երիտասարդ մայրերին բացի պետական ծննդոգնությունից տալ ֆինանսական աջակցություն՝ որպես խրախուսանք:

4. Արհկոմի նախաձեռնությամբ և միջոցների հաշվին կազմակերպել «Ծննդոգնություն համալսարանականներին» ծրագիրը:

5. Կազմակերպել այցելություններ դեպի պատմամշակութային հուշարձաններ: